

վանքը կը նորոգէ 1649ին (ՄՁ. թ. 228): Հակառակորդներու ձեռքով գահընկեց կ'ըլլայ, բայց կը վերահաստատուի կայսերական պէրամիով 1650 ին. ներկայ կ'ըլլայ Փիլիպպոս կթղի. 1651ին Երուսաղէմի մէջ գումարած ժողովին: 1653ին եւ 1656ին կրկին Պոլիս կ'ուղևորի վանական գործերու կարգադրութեան համար. դարձին փոխանորդ կը կարգէ Եղիազար վրդ. Այնթապցին, (ՄՁ. թ. 85 նաև Թորոս Աղբաւ Բ. էջ 399). վերջնոյս յարուցած զանազան խնդրոց եւ ոտնձգութեանց համար, թէև երկիցս կը չըրամարի աթոռէն, բայց դարձեալ պաշտօն ստանձնելով կը շարունակէ իշխանութիւնը, գործերու ղեկավարութիւնը կը յանձնէ իր աշակերտին՝ Կաֆայեցի Մարտիրոս վրդին. կը վախճանի 1670ին: (ԺՊԵ. Հատ. Ա. էջ 333-39 նաև ՄՁ. թ. 5). Իր տապանագիրն է

— «Նսեմայարկ դիրս ստորին
 Ունի աւանդ զանձ գովելին .
 Զմաքուր մարմին բազմերջանկին ,
 Աստուածատուր վարդապետին :
 Նըստեալ գահն Յակոբոսին ,
 Ըստ մարմնոյ եղբօր մերոյ Փրկչին ,
 Մեծ պատրիարք յաջորդ նմին .
 Յերուսաղէմ սուրբ քաղաքին :
 Հայրապետաց սրբոց կարգին ,
 Փայլէր վարուք գեր քան զնոսին .
 Էր անձանձիր ի քարոզին ,
 Աստուածաբան քաջ բարունին :
 Արդ փոխեցաւ ի ցանկալին ,
 Զուեաց յաստեացս յոյսն վերին ,
 Լցեալ շրջման ամք հազարին .
 Հարիւր քսան յարաբարդին» :
 (ՌՃԻ=1671)

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎՐԴ. ԱԼԱՇԿԵՐՏՅԻ, Մբ.—Լսպ. կնիքը 1733. կը վախճանի 1759ին: Իր տապանագիրը կը գտնուի Ս. Փրկչի վանքին վաստակաւորաց շարքին մէջ:

«Այս է տապան հանգստեան սրբոյն Յակոբոյ աւագ լուսաբար Ալաշկերտցի ի գիւղէն Նանաճանա, բազմաշխատ եւ շնորհալի Աստուածատուր վարդապետին որ հանգեաւ ի յոյսն վերին ե Ռ. Մ. Ը. (=1759) թվին, որք ընթեռնուք տուք զոգորմին»: